

ԱԿԱՄՍՅ ՊԱՏԱՍԽԱՆ.

Անցեալ տարուայ Մայիս ամսին ստացայ սր. Մառից նրա «Անույ շարք» Էռչուած հրատարակութեան երկրորդ տետրակը այսպիսի մակագրութեամբ. «Многоуважаемому о. архимандриту Месропу отъ Н. Марра»:

Դրբոյն ունի փոքրիկ յառաջարան 7 էրեսից և խիստ տօնով գրուած մի վերջաբան, ուղղած Ս. Պ. Սերեբրեակեանին (I—VII+1—55 և 56—64):

Յառաջարանում մի մեծ ծանօթութիւն (էջ III—IV) ուղղած է ինձ և գրուած է զայրացած և կրքոտ ոճով. գրուած է ինձ վերաւորելու և խիստ վերաւորելու դիտարկութեամբ: Այդ ոճը մի ոչ այնքան կարեւոր խնդրի առթիւ ես չէի կարող սպասել մի ուսումնականից և յատկապէս պրոֆ. Մառից, որի հետ մեր անձնական յարաբերութիւնները այնպէս են, որ նա ի վիճակի է իւր աշխատութիւնն ինձ ուղարկելու վերոյիշեալ վերաառութեամբ: Դուցէ այլ և այլ փոփոխութիւններ և կամ վերջի երկու տարուայ լրագրական վայրագ յարձակումները, որոնց պատասխանելը ես իմ արժանապատուութիւնից ստոր եմ համարել և ժամանակս խնայել, այնպէս են ազդել յարգելի դիտնականի վրայ, որ նա ևս հարկ է համարել իւր փոխուած տրամադրութիւնը հանդէս բերելու: Այլապէս ես գիտարանում եմ բացատրելու սր. Մառի յիշեալ ծանօթութեան անտեղի վերաւորանքը: Նա խիստ պատուազգաց անձ է, մանրակրկիտ ուսումնասիրող. իսկ այս գէպքում ուր են այդ յատկութիւնները. որովհետեւ նա ինձ հարց է առաջարկում, որի պատասխանը պէտք է լիուլի ստանար հէնց ճարտարապետ Թորոմանեանից, որի հեղինակութեան պաշտպանութեան համար է գրուած ծանօթութիւնը և որ այս գէպքում ամէնաէականն է, նա այդ պատասխանը պիտի գտնէր այն նիւթերի մէջ, որ հրապարակի վրայ էր և քննութեան ու բաղդատութեան համար իւր աչքի առաջ: Կամ միթէ նա կասկածում է, որ Պետերբուրգի դեղարուեստից Ակադէմիան աւարտած մասնագէտ ճարտարապետը չէր կարող «առ տեղեւուն» շարաթներով աշխատելով մի հասարակ յատկագրի՞ կազմել: Այդ ճարտարապետը, Քրիստափոր Տէր-Սարգսեանը աշխատում էր պ. Թորոմանեանի այնտեղ գտնուած ժամանակը. երբեմն խօսակցելով նրա հետ. դուցէ սորա մտքերից ընդունել, կամ «խրացրել» է. ես այդ

դէպքում, այլ և այլ եմբարդեալ գաղտնիքների մէջ ինչ մասնակցութիւն կարող էի և պէտք է ունենայի, ա իւրաքանչիւրինը իրան աւելով՝ Տէր-Սարգսեանից ստացած նկարն էլ ապել եմ իրրև նրա աշխատանք և արժանացել գիտնական պրոֆեսորի հետեւեալ բացարձակ անհիմն և կծու նկատողութեանը:

«Եջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիներ (Ազգագրական Հանդէս XV և XVI, յետոյ նաև առանձին գրքոյկ) ... հեղինակ Մեսրոպ վարդապետը, Թորոս Թորոմանեանին վերագրելով «բոլոր շինութիւնների ընդհանուր յատակագիծը» (հ. Խաչիկի պեղումների տեղում), յայտնում է, որ «ճարտարապետ պ. Քրիստափոր Տէր-Սարգսեանը պատրաստեց բուն եկեղեցու մանրագնին յատակագիծը (Ազգ. Հանդ. XV, 1907, էջ 90 և գրքոյկ էջ 6): Բայց հ. Մեսրոպին միթէ յայտնի չէ, որ ճարտարապետ Թորոմանեանը ոչ միայն «նկարեց բոլոր շինութիւնների ընդհանուր յատակագիծը» այլ և, առաջինը թափանցելով Զուարթնոց կլոր եկեղեցու առանձնայատուկ կերտուածքը նաև իրրև առաջինը կազմեց համապատասխան մանրամասն, միւսնոյն ժամանակ պատճառաբանուած յատակագիծ և այդ «բուն» եկեղեցու: Եւ պ. Թորոմանեանը վաղուց արդէն տպել է թէ «բուն եկեղեցու» յատակագիծը երկու ձևով և մինչև անգամ մի ամսագրական յօդուածում մասամբ տուել է դրա պարզաբանութիւնը «Զուարթնոց» վերնագրով (Մուրճ, 1905, Մայիս էջ 185—197): Յամենայն դէպս մեր առաջն է անըմբռնելի (недоумьбныхъ) հարցերից մէկը, որովհետև հ. Մեսրոպին մեզ առաջարկած Զուարթնոցի իրրև նոր և անկախ կազմուած յատակագիծը (տես Ն. Ազգ. էջ 127 և գրքոյկ էջ 44) ներկայացնում է արտասովոր նմանութիւն այնտեղ (այսինքն գրքոյկիս մէջ) լուսիեան տուած (замалчиваемымъ) պ. Թորոմանեանի մանրամասն յատակագծի հետ: Համանմանութիւնն էլ աւելի է ուժեղանում հետեւեալ աննշան բանից. այդ երկրորդ յատակագծի (Հանդ. Ազգագրականում) արդէն տպագրած վերարտադրութեան մէջ, երեք դռների կողքին, որքան որ ընդունում է հ. Մեսրոպը Զուարթնոցի մէջ (признаваемыми въ храмѣ Бдящихъ силъ о. Месропомъ), գրանւում են երկու դռներ եւս բացարձակ ակնյայտի սրբազրութեամբ կլիբեի վրայ (ստորագծումը պրոֆեսորինն է) այն հինգ դռներից, որ ընդունում է պ. Թորոմանեանը:

Յարգելի հ. Մեսրոպը, յուսով եմ, իմ այս տողերից յետոյ նպատակայարմար կգտնի վաղօրօք տպագրութեամբ արաայտուել, իրրև մի անձ որ այս խնդրում քաջատեղեակ է, ինչ ատիճանի է ուրոյն այդ զարմանալի համանմանութեան ծագումը:

արդեօք կախում կայ թէ, ընդհանրապէս անկախ է եղել ճարտարապետ Թորոս Թորոմանեանցի վերակազմութիւնից»։

Ո՞րքան հեգնութիւն երկու դռների պատճառով։ Ասկայն յարգելի պրոֆեսորը այդքանով չի քաւականացել։ Նա 1908 թ. Մայիսի 21-ի Պետերբուրգի կայսերական գիտութեանց ճեմարանի նիստերից մէկում ծանօթութիւն տալով պ. Թորոմանեանցի կենսագրութեան մասին, իրան իրաւունք է համարել նաև ուրիշ վերաւորանք հասցնելու Էջմիածնի «լուսաւորեալ» և «համալսարանական դիպլոմ» ունեցող միաբաններին, առանց ուղղակի անուն տալու։ Պրոֆ. Մառը այդ դիպլոմաւոր և լուսաւորեալ միաբաններին ծանօթ է և մի քանիսի հետ մօտ բարեկամ։ Կարծում եմ, չափազանց բնական կլինէր մտածել, որ նա պէտք է թիւրիմացութիւններից խուսափելու համար պ. Թորոմանեանին «վարպետ» կամ «ուստա» կոչող «լուսաւորեալ» միաբանի անունը տար և ոչ թէ մի ուսումնական ժողովում իւր բոլոր բաւեկամներին ու ծանօթներին պարսաւէր։¹⁾

Բայց անցնենք պ. Մառի յատկապէս ինձնից սպասած հարցի պատասխանին։ Ճարտարապետ Թորոմանեանն է սկզբում կազմել Զուարթնոցի յատակագիծը, գրում է նա, տպել Մուրճի 1905 թ. Մայիս ամսուայ համարում, իսկ ես 1907 թ. համանման մի յատակագիծ տպել եմ Սգրադրական Հանդէսում և ինչ որ խորհրդաւոր դադանապահութեամբ լուսթեան տալով բուն հեղինակին, այդ աշխատանքը վերագրել եմ պ. Տէր-Սարգսեանին։ Իբրև ապացոյց իմ յանցապարտ վարմունքի շեշտում է, որ թէև ես Զուարթնոցի մէջ երեք դուռ եմ ընդունում, իմ կլիշէի մէջ փոքրիկելով, Թորոմանեանի հետևողութեամբ, հինգ դուռ եմ շինել։

Պր. Մառը «փոքրիկ բաները» (мелочи) ուշադրութեան առնելով, շատ խոշոր բաներ է մոռացութեան տուել։ Յամենայն դէպս նա մի բան պիտի նկատէր, որ եթէ մէկը, այս դէպքում Քրիստափոր Տէր-Սարգսեանը, օգտուել է պ. Թորոմանեանի վերակազմութեան օրինակով, նա անուշադիր չէր թողնել նաև երկու չարաքաստիկ դռները։ Իսկ ընդհանրապէս,

1) Էջմիածնի դիպլոմաւոր վարդապետներից մէկը. «Տքտ. Գարեգին վարդ. Յովսէփեան» այդ յօդուածը Թարգմանել եւ տպել է «Բիւզանդիոն» Թերթում, հանդիստ իւզմով ընդունելով վիրաւորանքը, երևի քրիստոնէական խոնարհա հոռութեամբ, նա նոյն հանգստողութեամբ մարտել է յատկապէս աստուածաբանական դիտութեան ներկայացուցիչներին ուղղած կծու ակնարկը։

նոյն իսկ առանց ուսումնական և մասնագէտ լինելու, ով որ լիմ հրատարակած և թորոմանեանի յատակագծերը իրար մօտ դնելով, բաղդաաւելու նեղութիւնը յանձն առնի, նկատելով հանդերձ «չափազանց համամանութիւն» (поразительное совпадение), — ի՞նչ զարմանք երբ երկուսն էլ նոյն եկեղեցու յատակագիծն են ներկայացնում —, կնկատի նաև չափազանց խոշոր և աչքի ընկնող տարբերութիւններ: Մի կողմ թողած Տէր-Սարգսեանի նկարի կանոնաւորութիւնն ու գեղեցկութիւնը, սա ունի աւելի մասեր.

ա. եկեղեցու շուրջ բոլոր տարածուած աստիճանները,
բ. Գլխաւոր սեղանի աջ կողմի մասանց գղրոցը,

գ. Սեղանից գէպի ներքև իջնող երկու կողմի աստիճանները, թորոմանեանի (Պատկ. գ. 1) նկարը այդ մասում ուղղակի ռիսալ է և գ. Պիլիսապներին — եկեղեցու ներսից — յատակում շուրջ բոլոր տարածուած մայթը:

Չունի՝ արևելեան քառանկիւնի շինութեան արտաքին կողմի երեք աստիճանները:

Իսկ ամենագլխաւորը, շինութեան երկրորդ և ըստ թորոմանեանի նաև երրորդ յարկի ուղղութիւնը և նորա դառաւորութիւնը ցոյց տուող գծերը չորս հիմնական և միւս երկրորդական սիւների վրայ, երկու ճարտարապետների նկարի մէջ այնքան տարբեր են, որ մենք ոտիպուած ենք միայն զարմանալ, թէ ո՞րտեղից է պր. Մառը արտասովոր նմանութիւն գտել: Հէնց այդ մասումն է որ, պ. ճարտարապետները ձեռքի տակ չունենալով աւերակներից մնացած բաւականաչափ նիւթեր, իւրաքանչիւրը իւր հասկացողութեամբ է ցոյց տուել դմբէթի պատերի ուղղութիւնը: Ըստ Տէր-Սարգսեանի գմբէթը յենուած էր չորս հիմնական սիւների վրայ, կրկնակի քառակուսի գծերով, իսկ ըստ թորոմանեանի նախ մի քառակուսի և ուղիղ շրջան յենւում էր այդ չորս սեան վրայ, բացի այդ երկրորդ շրջագիծ պատեր միացնում են բոլոր սիւները, իսկ այդ շրջապատի վրայ կայ մի պատ, որ Տէր-Սարգսեանի մօտ ամենեւին չկայ:

Խնդրում եմ պր. Մառին և իւրաքանչիւր հարցով հետաքրքրուող անձի թող նորից համեմատի նկարները և ստուգի այդ թուած բոլոր փաստերը, որից յետոյ նա կհամոզուի, որ այդ տարբերութիւնները նկատելու և իբրև նորութիւն գծելու համար, անհրաժեշտ է ուսումնասիրութիւն «առ տեղեաւ», որը կատարել է Քր. Տէր-Սարգսեանը: Սա ունի դետալների ահագին արխիւ, որ մտադիր է պատրաստել և ապա գեղարուեստից Ակադեմիային ներկայացնելու. երանի թէ պատրաստի, այն

ժամանակ միայն Պետերբուրգում կհամոզուեն, որ հայկական արուեստը աւելի բարձր է, քան իրենց առաջ դրած նկարները:

Բայց ես ունիմ և ուրիշ փաստեր, որ իւր ձեռքի առիկ է ունեցել պր. Մառը և որ ապացուցանում են, թէ Տէր-Սարգսեանի պատկերը անհամեմատ շուտ է տպուել և միանգամայն անկախ է. ա. 1903 թ. Պետերբուրգի Սոցսերական Հնագ. Յայտարարութեան VII հատ. տպուած է Զուարթնոցի մասին իմ աշխատութիւնը, որը ինձ յանձնուեց գրելու յատկապէս պրոֆեսորի ցուցմամբ և որի սրբագրութիւնը իմ քաջակալութեամբ ինքն էր կատարել: Այդտեղ տախա. I ներկայացրած է Զուարթնոցի յատկապէս ճիշդ գուններով, որի սեղանի մասը և արեւելեան քառանկիւնին աւելի ուղիղ է և նման Տէր-Սարգսեանի նկարին, մինչդեռ Թորոմանեանի նկարում կան ակներև անճշտութիւններ: Այդ աշխատութեան մէջ (էջ 17) տուել եմ, «եկեղեցին ունէր հինգ դուռ. մի մի արեմուտքից, հիւսիսից և հարաւից, երկուսն էլ որցա մէջ»: Հետևապէս ես երեք դուռ ընդունում (նոյնը ահա գրքոյկին էջ 50): Ը. 1904 թ. ես կաթողիկոսի հրամանաւ գնացի Պետերբուրգ եկեղեցական կալուածքների խնդրի առթիւ: Մինչև Պետերբուրգ գնալս պատրաստի ունէի այն քնազրկը, որ միջոց չունենալով 1907 թ. միայն տպեցի Ազգագրական Հանդիսում. թէև ես աշխատանքս Թիֆլիզում ներկայացրի ցենզուբային, տպագրութեան Թոյլաւութիւն ստացայ և պէտք է տպագրէի Ն. Առաքելեանի հրատարակութիւնների շարքում, նրա միջոցաւ ստանալով տպագրութեան ծախքը մի ինձ անձանօթ անձից: Պետերբուրգում Հնագիտական Ընկերութիւնից խնդրեցի և ստացայ դուսերէն քնազրի առթիւ պատրաստած կլիշէները, որի մասին նախօրօք պրոֆեսորի միջնորդութիւնն էի խնդրել և պատրաստել տուի մի քանի նոր կլիշէներ, ի թիւս այլոց և Տէր-Սարգսեանի նոր կազմած յատկապէս: Պ. Առաքելեանը իմանալով որ Պետերբուրգում տպագրութեան ծախք շատ կլինի, հրաժարուեց տպագրութիւնից, իսկ ես սրովհետև պատկերները արդէն տպել էի տուել, իբրև ժամանց տպագրեցի աշխատութեանս համառօտութիւնը: Գրքոյկի վրայ կայ ցենզուբայի Թոյլաւութիւնը 1905 թ. Մարտի 7-ը, իսկ ես Պետերբուրգում գործս վերջացնելով, հեռացայ Ապրիլի 15-ին:

Իմ այդ գրքոյկը գտնուում է պր. Մառի Անիում կազմած գրադարանում (ահսնրա գրքոյկի էջ 51 № 6) և նրա էջ 15 տպած է Տէր-Սարգսեանի նկարը, սակայն առանց «երկու դռների»: Պ. Թորոմանեանի նկարը տպուել է Թիֆլիզում, Մուրճի Մայիս ամսուայ համարում, պարզ է, որ ես Պետերբուրգում նոյն

տարուայ Մարտին այդ նկարից օգտուել չէի կարող: Բայց այդ վերադարձին մտայ Անի, տեսայ պ. Թորոմանեանին, դրօշակէյն թողելի օրինակներ նրա մօտ վաճառելու: Եթէ ես Մառի պէս մտածէի, կարող էի պնդել թէ Թորոմանեանը իւրացրել է Տէր-Սարգսեանի նկարը, իւր կողմից աւելացնելով «Երկու դուռ» միայն:

1904 թ. ամառը Քր. Տէր-Սարգսեանը երկու անգամ եկաւ Էջմիածին և լրջօրէն պարտաւոյ Զուարթնոցի տերակներով՝ նա պատրաստեց յատակագիծը և լուսանկարելով Թիֆլիզից ինձ ուղարկեց: Պ. Թորոմանեանը ինքը ևս այդ միջոցին գտնուած էր Էջմիածնում, քանիցս դա եկեղեցու վերակադմութեան մասին վէճի է քննուել նրա հետ և ինձ մօտ տեսել է Տէր-Սարգսեանի նկարը: Նախ քան այդ նկարի ստացումը, ես նոյնը խնդրել էի պ. Թորոմանեանից, իսկ նա հրաժարուեց տալու առարկելով թէ նկարելու անհրաժեշտ դրօշիքները չունի և մոռալինձ միայն հաթուղիկոտական տան ուրուագիծը, որ և դրփն մէջ հրատարակուած է իւր անունով: Երբ 1907 թ. ապագրեցի իմ աշխատութիւնը, չէի տեսել նրա յօդուածը Մաքճի մէջ, այլապէս լռութեան չէի տալ, մանաւանդ որ ես մի քանի անգամ եմ, այն էլ նրա բերանացի հաղորդած տեղեկութիւնների հիման վրայ, նրան վկայութեան կանչում (էջ 6, 48, 50, 57, 58) և այդ պարտնի մասին ի մօջի այլից գրել եմ. «արկաւոր է (եկեղեցու) ընդ որ միմեանցից բաժանուած բեկորները համարութեամբ միացնել՝ որպէսզի իւրացանչիւր քար իւր տեղը դրուի և չբացատրուած քար չմնայ գուրը: Այդ աւսասանք կատարել և նախարարեալ Թ. Թորոմանեանը, որը մի քանի ամիս աշխատել է Զուարթնոցի վերականգման վրայ և իւր ներկայութեամբ մի քանի մասեր յատուկ պնդել է տուել (էջ 48)»:

Մնում է բացազրել «Երկու դռների» գողանիլը: Թէ եկեղեցին հինգ դուռ ունի, այդ դուռ ևս նշանակել է ճեմարանի աշակերտը, որ նկարել է ամենաառաջի յատակագիծը, հետեալէս այդ առանձնայատկութիւնը չէր կարող խուսափել Տէր-Սարգսեանի ուշադրութիւնից, իսկ ես սրբադրելու համար իմ կլիշէի սխալը կարող էի օգտուել, առանց Թորոմանեանին դիմելու, հէնց իմ ձեռքով ապագ աշխատանքից: Մինչդեռ իրողութիւնը այսպէս է. Տէր-Սարգսեանի լուսանկարը բաւական թոյլ էր. լուսագոյն կլիշէի համար իմ խնդրանքը Պետերբուրգում ճարտարապետ Տամանեանը թանաքով վերանկարեց և նա էր մոռացել այդ «Երկու դռները» նկարում. նոյնը խուսափել էր և իմ ուշադրութիւնից, որ փորձեցի սրբազրել, հին կլիշէյում փորփրելով համապատասխան պատուհանները:

Ձեմ հարող լուսթեամբ անցնել նաև պր. Մառի վերոյի-
շեալ կենսագրականը, ուր իրեն թոյլ է տալիս, ինչպէս յիշեցինք,
չափազանց սովորական դարձած եղանակով ընդհանուր մեղա-
դրանք շարեւէ էջմիածնի հասցէին, մի ուսումնական ժողովում
գրելով թէ էջմիածնում «չատ կասկածանքով էին նայում պ.
Թորոմանեանի վրայ». որ իրեն ճարտարապետ էր անուանում,
չունենալով Ռուսաց գեղարուեստից ճեմարանի. . . վկայական:
Մէկը լուսաւորեալ վանականներից, որոնց թւում կան համալ-
սարանական վկայականով անձինք, ուրիշ կերպ չէր կամենում
անուանել նրան իրենց աչքին այդ ինքնակոչ ճարտարա-
պետին, բայց եթէ «վարպետ» այսինքն հասարակ «ուստա»:
Նոյն յօդուածում մի փոքր առաջ նկատագրելով պ. Թորոման-
եանի անմիջիկապ վիճակը, ըստ նիւթականին, մեղադրում է
պ. Բասմաճեանին, որ խոստումներով նրան Ռումինիայից բե-
րել է և Անի ձգելով, թողել գնացել է: Վարժելով որ պ. Բաս-
մաճեանը այդ մեղադրանքին ինքը կպատասխանի ի լոյս ածելով
պ. Թորոմանեանի նամակները, որ նա ինձ ցոյց տուեց Պարի-
զում և որ ապացուցանում են թէ պ. Թորոմանեանը իւր աշ-
խատանքը կատարելու համար Բասմաճեանի միջնորդութեամբ
Թիֆլիզի մի վաճառականից մի տարուց աւելի որոշ ամսական
էր ստանում, հարկ եմ համարում որտիս ամբողջ թափով բողո-
քելու, գոնէ իմ անունից, հռչակ ստացած ուսումնականի
միանգամայն անհիմն մեղադրանքի դէմ և համառոտակի տսել,
թէ ես—գիպլոմաւորներից մէկը, ի՞նչ եմ արել այդ ճարտա-
րապետի համար:

Ես պ. Թորոմանեանի հետ հանդիպեցի Չուարթնոցում.
տեսայ նրա աշխատանքները, անմիջապէս հետաքրքրուեցի նրան-
ցով, խնդրեցի դալ ինձ մօտ, ուր առիթ ունեցայ ի մօտոյ ծա-
նօթանալու նրան: Նիւթականապէս նրան օգնել չէի կարող իմ
համալսարանին ոտացած ամսական 25 ռ. թոշակով, բայց
աշխատեցի բարոյապէս ըստ չափու կարեաց միւրթարել նրան:
Իմ յանձնարարականով, յարգելի պրոֆեսոր, նա եկաւ Ձեզ
Անիում գտաւ և այնքան օգտակար եղաւ Ձեզ և ի վերջոյ
1905 թ. Վարդանանց տօնին, Պետերբուրգում պրոֆ. Վարդան-
եանցի տանը, երբ ի մի էին հաւաքուած եկեղեցու խորհրդի
անդամները, ամենաջերմ միջնորդութեամբ խնդրեցի նրան
ամսաթոշակ կապել, որով փորձեցի նրան նիւթապէս ևս օգ-
նած լինել:

Իսկ թէ էջմիածնի գիպլոմաւորները նրան «ճարտարապետ»
են ճանաչել և ոչ «ուստա» կամ «վարպետ» և ըստ արժանոյն
գնահատել նրա աշխատանքը, դրա ապացոյցը կայ իմ «էջմիա-

ծին և Հայոց Հնագոյն եկեղեցիներ» աշխատութեան մէջ, որից վիայութիւններ թէ վերև առաջ բերի և թէ կարող են գտնել ուշադիր ընթերցողները:

Ռժմից ռժմից, բայց յատկապէս պր. Մառից Էջմիածնի դիպլոմատոր և լուսաւորեալ միաբանները չէին կարող սպասել այդպիսի մեղադրանք, որին նորա միշտ յարգել են թէ իբրև գիտնականի թէ իբրև տնձի և այդ վերաբերմունքը միշտ արտայայտել են ինչպէս կարողացել են:

Նոյն խնդրի առթիւ մի քանի խօսք Խաչիկ վարդապետին: Նա ևս, ճշմարտութիւն խօսելու դիտաւորութեամբ, Արարատի անցեալ տարուայ (էջ 889) մի նկատողութեան մէջ գրում է, որ ինքը իբրև գործին ծանօթ հարկ անհրաժեշտ է համարում վիայելու, թէ Թորոմանեանը առաջինն է Զուարթնոցի թէ յատկապէս և թէ ամբողջ շինութեան վերակազմողը:

«Ճշմարտախօս» Խաչիկ վարդապետի նկատողութեան համար հարկ եմ համարում գրելու, որ նա իմ սենեակում տեսել է պ. Տէր-Սարգսեանի նկարը հինգ դռնով, պ. Տամանեանի արտանկարը երեք դռնով, լսել է իմ բացադրութիւնը, ինձ հետ համաձայնուել և այնուամենայնիւ գրել իւր քաջատեղեակ ծանօթութիւնը: Հարկաւ նա աղատ է այս իմ վիայութեան դէմ էլ նոր բան գրելու, կամ գուցէ կարողանար ցոյց տալ, որ Թորոմանեանի նկարը Պետերբուրգ գնացած ժամանակս եղել է իմ ձեռին: Ես մի թէ երկու ճարտարապետների Զուարթնոցի յատկապէս յետ ու առաջ նկարելու խնդիր եմ արել, ես տեսել եմ իմ աշխատութեան մէջ ապագրած յատկապէս պ. Տէր-Սարգսեանին է. պր. Մառը չհաւատալով կասկած էր յայտնել. հ. Խաչիկը ուղիղ վարուած կլինէր, եթէ պնդէր, որ Մեսրոպ վարդապետը այս կամ այն դիտաւորութեամբ հաճոյք է զգացել պ. Թորոմանեանի գործը Տէր-Սարգսեանին տալու և ապացուցանէր այդ տեսակ «իմաստուն» վարմունքի հնարաւոր շարժառիթները:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ.